ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՊԵՏԱԿԱՆ ԵԿԱՄՈՒՏՆԵՐԻ ԿՈՄԻՏԵ
ԳԼԽԱՎՈՐ ՔԱՐՏՈՒՂԱՐ

«21» մարտի 2024թ. No 4/1-9

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

«Երվադա» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու վերաբերյալ

Գնման ընթացակարգի ծածկագիր՝ **ՊԵԿ-ՀԲՄԱՇՁԲ-23/1**

Մասնակից՝ **«Երվադա» ՍՊԸ**

(ք.Երևան, Արին Բերդի 3-րդ նրբ. 10/3)

ՀՀ պետական եկամուտների կոմիտեի կարիքների համար կազմակերպված ՊԵԿ-ՀԲՄԱՇՁԲ-23/1 ծածկագրով գնումների էլեկտրոնային (ARMEPS) համակարգի միջոցով հրատապ բաց մրցույթով ՀՀ Կոտայքի մարզի Նաիրի համայնքի Պռոշյան գյուղի Գևորգ Չաուշի խճուղի թիվ 5 հասցեում գտնվող ՀՀ ՊԵԿ վարչական շենքերի քանդման աշխատանքների գնման ընթացակարգին հայտ է ներկայացրել նաև «Երվադա» ՍՊԸ-ն: ՊԵԿ-ՀԲՄԱՇՁԲ-23/1 ծածկագրով գնման հրավերի պայմանագրի նախագծի Հավելված թիվ 1-ի՝ ծավալաթերթ-նախահաշվի տեխնիկական նկարագրությունում նշվել է, որ վերոգրյալ աշխատանքները իրականացնելու համար մասնակիցը պետք է ունենա գործունեության լիցենզիային կից տրամադրվող հետևյալ ներդիրները, անվտանգության բնագավառ՝

1. Պայթուցիկ նյութերի, պայթեցման սարքավորումների առևտրի և պայթեցման աշխատանքների կատարման:

Քաղաքաշինության բնագավառ՝

2. Շինարարության իրականացում՝ բնակելի, հասարակական և արտադրական:

Սակայն գնահատող հանձնաժողովը պարզել է, որ «Երվադա» ՍՊԸ-ն չունի անվտանգության բնագավառի պայթուցիկ նյութերի, պայթեցման սարքավորումների առևտրի և պայթեցման աշխատանքների կատարման համապատասխան լիցենզիա և այդ լիցենզիայի ներքո աշխատանքները «Երվադա» ՍՊԸ-ն պետք է իրականացնի ենթակապալի պայմանագիր կնքելու միջոցով: ՊԵԿ-ՀԲՄԱՇՁԲ-23/1 ծածկագրով գնահատող

հանձնաժողովը գրավոր դիմել էր ՀՀ ՊԵԿ իրավաբանական վարչությանը՝ ստանալու իրավական եզրակացություն, արդյոք «Երվադա» ՍՊԸ-ի կողմից ներկայացված հայտը ենթակա է մերժման, թե ոչ և պատվիրատուն իրավասու է «Երվադա» ՍՊԸ-ին պայմանագիր կնքելու առաջարկ ներկայացնել: ՀՀ ՊԵԿ իրավաբանական վարչությունը բարձրացրած հարցի վերաբերյալ տվել է իրավական եզրակացություն, համաձայն որի «Երվադա» ՍՊԸ-ն չունի համապատասխան լիցենզիա և գնման գործընթացին մասնակցում է ենթակապալի պայմանագրով, պայմանով, որ լիցեզիայի պահանջին բավարարում է ենթակապալառուն՝ մասնակցի՝ համապատասխան գործունեությամբ զբաղվելու լիցենզիայի բացակայության հանգամանքով պայմանավորված վերջինիս հայտը ենթակա է մերժման:

ՀՀ, Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանի (այսուհետ նաև՝ Դատարան) վարույթում է գտնվել թիվ ԵԴ2/0197/02/24 քաղաքացիական գործն ըստ հայցի «Երվադա» ՍՊԸ-ն ընդդեմ ՀՀ պետական եկամուտների կոմիտեի՝ ՀՀ Կոտայքի մարզի Նաիրի համայնքի Պռոշյան գյուղի Գևորգ Չաուշի խճուղի թիվ 5 հասցեում գտնվող ՀՀ ՊԵԿ-ի վարչական շենքերի քանդման աշխատանքների նպատակով 07.11.2023 թվականի թիվ 1 որոշմամբ հայտարարված թիվ «ՊԵԿ-ՀԲՄԱՇՁԲ-23/1» ծածկագրով գնման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 10.01.2024թ-ին կազմված թիվ 8 արձանագրությամբ՝ «ԵՐՎԱԴԱ» ՍՊԸ-ի հայտը մերժելու մասին կայացված որոշումն անվավեր ճանաչելու և պայմանագիր կնքելուն պարտավորեցնելու պահանջների մասին:

Դատարանի՝ 15.03.2024թ. հրապարակած և հրապարակման պահից օրինական ուժի մեջ մտած վճռով, «Երվադա» ՍՊԸ-ի ներկայացրած հայցադիմումը մերժվել է:

Եզրահանգում

Վերոնշյալ կարգավորումների համատեքստում անդրադառնալով առկա փաստական հանգամանքներին՝ պետք է արձանագրել, որ ի հակադրություն հրավերի պահանջներին՝ որպես գնման գործընթացի մասնակից հանդես եկած «Երվադա» ՍՊԸ-ն՝ չունի հրավերով պահանջվող համապատասխան լիցենզիա, խախտել է գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունը, որը հանգեցրել է Պատվիրատուի կողմից գնման գործընթացին «Երվադա» ՍՊԸ-ի հետագա մասնակցության դադարեցմանը:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով Օրենքի 6-րդ հոդվածի 2-րդ մասով, այն է՝ Լիազորված մարմինը մասնակցին ներառում է գնումների գործընթացին մասնակցելու

0015, Երևան, Մ. Խորենացի 3,7 Հեռ. +374 60 84 46 57
Կայք՝ www.petekamutner.am էլ. փոստ՝ secretariat@petekamutner.am

իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում պատվիրատուի ղեկավարի պատճառաբանված որոշման հիման վրա, որոշում եմ «Երվադա» ՍՊԸ-ին ներառել գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում:

3/21/2024

X

ԷԴԳԱՐ ԳԵՎՈՐԳՅԱՆ

Signed by: GEVORGYAN EDGAR 4010690054 ԷԴԳԱՐ ԳԵՎՈՐԳՅԱՆ